Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ «ԿԱՆԱՉ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՇՈՒԿԱ» ԾՐԱԳՐԻ (SMGP) ՆԵՐԴՆՈՒՄ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

UNIDO United Nations Industrial Development Organization (ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպություն)
EaP Eastern Partnership (Արևելյան գործընկերություն)
SMGP Single Market for Green Products (Կանաչ արտադրանքների միասնական շուկա)
LCT Life cycle thinking (Կյանքի ցիկլային մտածողություն)
LCA Life-cycle assessment (Կյանքի ցիկլային գնահատում)
LCI Life cycle inventory (Կյանքի ցիկլի գույքագրում)
PEF Product environmental footprint (Արտադրանքի բնապահպանական հետք)
OEF Organisation Environmental Footprint (Կազմակերպության շրջակա միջավայրի հետք)
PEFCR Product Environmental Footprint Category Rules (Արտադրանքի շրջակա միջավայրի հետքի կատեգորիայի կանոններ)
OEFSR Organisation Environmental Footprint Sector Rules (Կազմակերպության բնապահպանական հետքի ոլորտի կանոններ)

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական միության (ԵՄ) «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի շրջանակներում ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (UNIDO) ներկայացնում է ԵՄ Կանաչ արտադրանքների միասնական շուկա (SMGP) նախաձեռնությունը Արևելյան գործընկերության (EaP) տարածաշրջանում, աջակցելու Արևելյան գործընկերության երկրներում՝ ներառյալ Հայաստանում, Կանաչ և շրջանաձև տնտեսության զարգացմանը և տրամադրելու արժեքավոր տեղեկատվություն և ռեսուրսներ՝ կապված SMGP և Արտադրանքի բնապահպանական հետքի (PEF) մեթոդաբանության հետ: Այս տեղեկատվական նյութը հանդիսանում է PEF-ին ուղղված «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի»-ի շրջանակներում ստեղծված ռեսուրսների մաս, որը միտված է օգնելու էկոլոգիապես մաքուր և SMGP գործելակերպը Հայաստանի Հանրապետությունում խթանելուն:

ԻՆՉ Է ԿԱՆԱՉ ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՇՈՒԿԱՆ (SMGP)

Հայկական ընկերությունները, որոնք ցանկանում են շուկա մուտք գործել որպես էկոլոգիապես մաքուր, մեթոդների և ընթացակարգերի միասնական համակարգի բացակայության պատճառով սովորաբար բախվում են բնապահպանական կատարողականի արդար համեմատության դժվարությունների:
Եվրոպական Միությունում (ԵՄ) բնապահպանական հաղորդակցության մակարդակում հավասար մրցակցային դաշտ ստեղծելու համար 2013-2018 թվականներին Եվրոպական հանձնաժողովը ներկայացրել է Կանաչ ապրանքների միասնական շուկա (SMGP) նախաձեռնությունը: Դրա շրջանակներում ավելի քան 280 կամավոր ընկերություններ և կազմակերպություններ Արտադրանքի բնապահպանական հետքի (PEF) կամ Կազմակերպության բնապահպանական հետքի (OEF) միջոցով տեղեկացան շրջակա միջավայրի հետքը հաշվարկելու համար անհրաժեշտ պահանջներին:

ԻՆՉ Է ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԵՏՔԸ (PEF)

PEF մեթոդոլոգիան ապրանքի կամ ծառայության կյանքի ցիկլի ընթացքում բնապահպանական կատարողականի բազմաչափ հաշվարկ է: PEF տեղեկատվությունը թողարկվում է շրջակա միջավայրի վրա ապրանքների ազդեցությունները և ծառայությունները նվազեցնելու և/կամ հաղորդակցելու նպատակով՝ ընդգրկելով դրանց ամբողջ կյանքի ցիկլը (հումքի արդյունահանումից մինչև արտադրություն, տեղափոխում, օգտագործում և հեռացում): Այլ կերպ ասած, PEF-ը ԵՄ-ի կողմից առաջարկվող մեթոդ է, որը հիմնված է Կյանքի ցիկլի գնահատման (LCA) վրա արտադրանքի կամ ծառայության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները քանակականացնելու համար: PEF-ը LCA-ը իրականացնելու միջոց է, սակայն ունի առավելություն քանզի ավելի հետևողական, հուսալի և վերարտադրելի արդյունքներ է ապահովում: Դա պայմանավորված է PEF մեթոդոլոգիայի՝ հստակ սահմանված կանոններ ապահովելով, որոնք նվազեցնում են մեկնաբանության ազատությունը, և խիստ պահանջներով, որոնք ապահովում են տվյալների հավաքագրման բարձր որակ և վավերացում:

ՈՐՔԱՆՈՒ Է ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՏՐԱՍՏ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ ԵՄ ԿԱՆԱՉ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՇՈՒԿԱ

Հայաստանի կառավարությունը շրջանաձև տնտեսության սկզբունքների, կլիմայի փոփոխության ազդեցության և շրջակա միջավայրի հետ կապված այլ առաջնահերթությունների շուրջ միջազգային կազմակերպությունների հետ միավորված ջանքերի շնորհիվ կարևոր քայլեր ձեռնարկեց: Թեև ռազմավարական փաստաթղթերի հեռանկարային մշակումը բարենպաստ հիմք է էկոպիտակավորման վերաբերյալ որոշումների կայացման և քաղաքականություն մշակելու համար, հանրային հատվածին ուղղված քաղաքականությանն ու ռազմավարությանը լայն կիրառում տալու համար անհրաժեշտ են խրախուսման մեխանիզմներ:

2022 թվականի հունիսի 27-ին ՀՀ կառավարությունը Համաշխարհային բանկի, Եվրոպական միության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ համատեղ գործարկել է «Աճ և վերականգնում՝ հանուն Հայաստանի հզորացման, վերազինման և բարգավաճման»[1] հարթակը: «Կանաչ Հայաստան» համատեղ հարթակը նպատակ ունի միավորել քաղաքականությունն ու ներդրումային նախագծերը Հայաստանի կանաչ տնտեսության զարգացմանը: Կայունության նպատակներին հասնելու և հարթակի արդյունավետությունն ապահովելու համար նախաձեռնող կողմերը կարևորում են պետական, մասնավոր և միջազգային գործընկերների միջև սերտ համագործակցությունը:

Հայաստանի Հանրապետության հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը (2014-2025 թթ.) [2] և Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը (2021-2026 թթ.)[3] ընդգծում են Հայաստանի զարգացման ոլորտային կամ տարածքային ռազմավարական ուղղությունները: Փաստաթղթերը ներառում են բնապահպանական և տնտեսական ուղղություններ, ինչպիսիք են կանաչ տնտեսության հայեցակարգը, ռեսուրսների արդյունավետությունը և համապատասխան ենթակառուցվածքները:

[1] Source: www.worldbank.org/en/news/press-release/2022/06/28/first-policy-dialogue-of-the-green-armenia-joint-platform-takes-place
[2] Source: www.gov.am/files/docs/1322.pdf
[3] Source: www.gov.am/files/docs/4586.pdf

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

էկոլոգիապես մաքուր կամ կանաչ արտադրանքի խթանման նպատակով պետական կառույցների ներկայացուցիչները բխելով ինստիտուցիոնալ կանոնակարգերից, պետք է պարբերաբար ներդրումներ կատարեն շահագրգիռ կողմերի ներկլաստերային համագործակցության հնարավորությունների ուղղությամբ: Արտահանմանն ուղղված արտադրանքը խթանելու աշխատանքները դինամիկ ձեռնարկություն են, ինչի շնորհիվ էլ ներգրավված ինստիտուցիոնալ շահագրգիռ կողմերը հավատարիմ են արտահանմանն ուղղված ընկերությունների հզորացմանը, պետություն-մասնավոր երկխոսության ամրապնդմանը և անհրաժեշտ կարողությունների զարգացմանը: Հայաստանում արտադրական ընկերությունների շրջանում PEF մեթոդների խթանումը կարող է օգնել բարձրացնել Հայաստանի արտահանման կարողությունները թույլ տալով տեղական արտադրողներին մրցել բնապահպանական ուղղվածությամբ արտադրանքների աճող շուկաներում:

ԻՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ PEF-Ը ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

PEF ձեռնարկություններին հնարավորություն է տալիս արդյունավետորեն բարելավել մատակարարման շղթայի կայունությունը: PEF-ի ուսումնասիրությունն արժեքավոր պատկերացումներ կարող է տալ արտադրանքի բաղադրիչների, մշակման քայլերի կամ կյանքի ցիկլի փուլերի վերաբերյալ. հետևաբար գերազանց մեկնարկային կետ է ազդեցության նվազեցման համար: Օրինակ՝ արտադրական դիզայնի վերանայում՝ ռեսուրսների հոսքերը փակելով կամ արտադրանքները վերաիմաստավորելով:

Բացի տվյալների բազաներ, ազդեցության ցուցիչներ և հաշվարկման կանոններ առաջարկելուց, արտադրանքի հատուկ կատեգորիայի կանոնները (PEFCRs) նաև ընդհանուր կանոններ են սահմանում ապրանքային խմբերին, որպեսզի ընկերությունները կարողանան համեմատել իրենց առաջընթացը իրենց կատեգորիայի այլ արտադրանքների համեմատ: Ձեռնարկությունները կարող են հասկանալ և համեմատել իրենց բնապահպանական ցուցանիշները մրցակիցների հետ (հայկական և եվրոպական): Հենանիշավորումը նաև խթան է հեղինակություն, կայուն և էկոլոգիապես մաքուր ապրանքներ ու ծառայություններ ստեղծելու համար, որոնք գնահատվում են սպառողների առօրյա գնումներում:

Հետևաբար, բնապահպանական դրական ցուցանիշներ գրանցելը, հատկապես դինամիկ և մրցունակ շուկայում, ինչպիսին ԵՄ շուկան է, հավելյալ արժեք կարող է ստեղծել, որը կարող է ապահովել բիզնեսի լավ հեռանկարներ և առողջ ռազմավարություն ընկերության համար: Սպառողների կողմից գնումների վերաբերյալ տեղեկացված որոշումներ կայացնելը ընդունված պրակտիկա է դարձել Եվրոպայում և ամբողջ աշխարհում: Համեմատելով նմանատիպ ապրանքների կամ ծառայությունների կատարողականը՝ սպառողները կարող են վստահել նոր ապրանքանիշերին և տեղեկացված որոշումներ կայացնել:

ՈՐՊԻՆՔ ԵՆ ԷԿՈԼՈԳԻԱՊԵՍ ՄԱՔՈՒՐ ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջարկելով էկոլոգիապես մաքուր արտադրանք, որը կարող է ապահովել հուսալի մրցակցություն բնապահպանական արժեքի տեսանկյունից՝ արտադրողները կարող են տարբերվել մրցակիցներից: Արտադրողները կարող են հաճախորդների մեջ ճանաչում ձեռք բերել՝ կայունության նկատմամբ իրենց հանձնառության համար ապրանքները կամ ծառայությունները պատասխանատու կերպով պատրաստելով և մատուցելով: Սա, իր հերթին, շրջակա միջավայրի և կայունության նկատմամբ դրական վերաբերմունքի շնորհիվ կարող է հանգեցնել աշխատակիցների առավել ուժեղ կապվածության: Բացի այդ, արդյունավետ գործընթացների և բնապահպանական կայունություն ապահովող նախաձեռնությունների միջոցով էկոլոգիապես մաքուր արտադրանքի առաջարկը կարող է տնտեսական օգուտներ գրանցել:

Վաճառքի ավելացման միջոցով արտադրողները կարող են օգուտ քաղել էկոլոգիապես մաքուր արտադրանքից, քանի որ վերջնական սպառողները նախընտրում են կամ երբեմն անգամ պահանջում են արտադրանքի բնապահպանական կայունության հավաստագրերը: Սա նշանակում է, որ արտադրողները, որոնք առաջարկում են նման ապրանքներ, կարող են գրավել էկոլոգիապես ավելի գիտակից սպառողներին: Ավելին, էկոլոգիապես մաքուր արտադրանքի առկայությունը կարող է հանգեցնել գնորդների հավատարմության բարձրացմանը, քանի որ առավել հավանական է վերադառնալ այն արտադրողին, որը համահունչ է կայունության վերաբերյալ իրենց արժեքներին և համոզմունքներին:

էկոլոգիապես մաքուր արտադրանքը բազմաթիվ առավելություններ ունի համայնքների համար: Դրանք բարելավված գործընթացների միջոցով կարող են օգնել նվազեցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունը հանգեցնելով թափոնների նվազեցման և վերամշակման ջանքերի ավելացման: էկոլոգիապես պատասխանատու գործունեությունը խթանելով այս արտադրանքները կարող են նաև բարձրացնել կայունության կարևորության մասին իրազեկվածությունը: Բացի այդ, պիտակավորման միջոցով տրամադրելով կայունության մասին տեղեկատվություն, ծառայություններ մատուցողները կարող են ավելի դյուրին և ծախսարդյունավետ դարձնել սպառողների համար տեղեկատվության ստացումը՝ հետագայում խրախուսելով էկոլոգիապես պատասխանատու գնման որոշումները: Ընդհանուր առմամբ, էկոլոգիապես մաքուր արտադրանքի օգտագործումը կարող է օգնել համայնքներին հասնել ավելի կայուն հեռանկարի:

Կոնտակտային տվյալներ
ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպություն
«ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագիր
ղեկավար Տատյանա Չերնյավսկայա
Հեռ.՝ +43 1 26 0 26 5520
Էլ. փոստ՝ t.chernyavskaya@unido.org
Կայք՝ www.unido.org

ԻՆՉՊԵ՞Ս Է «ԵՄ-Ն ՀԱՆՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ» ԾՐԱԳԻՐԸ ԽԹԱՆՈՒՄ PEF

Ներկայում Արևելյան գործընկերության տարածաշրջանում PEF մեթոդոլոգիան ներկայացվում է UNIDO-ի կողմից՝ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի միջոցով: Այստեղ, ի թիվս այլոց, ծրագրված աշխատանքը ներառում է առկա պրակտիկաների և PEF-ի ներդրման խոչընդոտների քարտեզագրում, դրանց համեմատում պիտակավորման առկա սխեմաների հետ, իրազեկվածության և ըմբռնման բարձրացում SMGP նախաձեռնության հնարավորությունների և առավելությունների մասին PEF-ի միջոցով, և առաջնորդում դեպի PEF-ի պիլոտավորում և խթանում ընտրված ոլորտներում:

Ծրագիրը տեղական շահագրգիռ կողմերին ավելի իրազեկ կդարձնի PEF-ի կիրառման հնարավոր օգուտների և ազդեցության մասին, կստեղծի տեղական կարողություններ EaP տարածաշրջանում, կօգնի ազգային արդյունաբերություններին ավելի լավ պատրաստված լինել հնարավոր քաղաքականությունների համար՝ ներառյալ PEF-ը , և կապահովի ուսուցման հնարավորություններ տեղական փորձագետների համար՝ օգտագործելով պիլոտային ուսումնասիրությունները և կոնկրետ առաջարկներ ներկայացնելով ավելի կայուն արտադրության համար: Բացի այդ, ԵՄ-ն և UNIDO-ն կներառեն տեղական իրազեկման և կարողությունների զարգացման գործողություններ, որոնք կնպաստեն և ավելի լայնորեն կաջակցեն «կանաչ» ջանքերին և քաղաքականություններին:

«ԵՄ-Ն ՀԱՆՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագիրը նպատակ ունի պահպանել և արդյունավետ օգտագործել բնական կապիտալը, բարձրացնել մարդկանց բնապահպանական բարեկեցությունը և խթանել կանաչ տնտեսական աճը Արևելյան գործընկերության երկրներում: Ծրագրի նախաձեռնություններն օգնում են իրականացնել քաղաքականության և օրենսդրական փոփոխություններ, պլանավորել ու ներդրումները դարձնել առավել կանաչ, խթանել նորարարական տեխնոլոգիաների յուրացումը՝ ընդունելով նոր բիզնես մոդելներ և ստեղծելով կանաչ աշխատատեղեր: Դրա շրջանակներում, ըստ Արդյունք 2 բաղադրիչի, շրջանաձև տնտեսության և աճի նոր հնարավորությունների, UNIDO-ն պատասխանատու է հետևյալ արդյունքների համար.

1. Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) ռեսուրսների արդյունավետ օգտագործում և ավելի մաքուր արտադրության ընդլայնում.

- Ոլորտում ռեսուրսների արդյունավետության մասին կարողությունների զարգացում և իրազեկում,
- Արտադրական ՓՄՁ-ների համար ռեսուրսների օգտագործման արդյունավետության և ավելի մաքուր արտադրության գնահատումներ,
- Ձեռնարկությունների ռեսուրսների արդյունավետության և մաքուր արտադրության ակումբների ստեղծում,
- Գոյություն ունեցող արդյունաբերական տեղամասերում էկոարդյունաբերական պարկերի գաղափարի կիրառման իրագործելիության գնահատում,
- Ընտրված մարզերում արդյունաբերական թափոնների քարտեզների մշակում:

2. SMGP նախաձեռնության և PEF մեթոդաբանության հայեցակարգերի և գործիքների ներդրում և խթանում

- PEF խոչընդոտների և հնարավորությունների քարտեզագրում
- SMGP իրազեկման խթանում
- PEF կիրառման կարողությունների զարգացում
- PEF փորձարկում ընտրված ՓՄՁ-ներում

Ծանուցում
Այս հրատարակումը կազմվել է Եվրոպական միության աջակցությամբ: Սույնով արտահայտված տեսակետները բացառապես UNIDO-ի և պարտադիր չէ, որ արտահայտեն Եվրոպական միության պաշտոնական կարծիքը: Այս թռուցիկը պատրաստվել է առանց ՄԱԿ-ի պաշտոնական խմբագրման: Սույն թռուցիկում օգտագործված անվանումները և բովանդակությունը չեն ենթադրում որևէ կարծիքի արտահայտում UNIDO կողմից որևէ երկրի, տարածքի, քաղաքի կամ տարածքի իրավական կարգավիճակի կամ նրա իշխանությունների, կամ իր սահմանների, սահմանազատման, տնտեսական համակարգի կամ զարգացման աստիճանի վերաբերյալ: «Զարգացած», «արդյունաբերականացված» կամ «զարգացող» անվանումները նախատեսված են վիճակագրական հարմարության համար և պարտադիր չէ, որ դատողություն արտահայտեն զարգացման գործընթացում որոշակի երկրի կամ տարածքի փուլում գտնվելու վերաբերյալ: Ընկերությունների անվանումների կամ առևտրային ապրանքների հիշատակումը չի հանդիսանում UNIDO-ի կողմից հաստատում: Ներկայացված կարծիքները, թվերը և գնահատականները հեղինակների պատասխանատվությունն են և պարտադիր չէ, որ համարվեն UNIDO-ի և նրա անդամ պետությունների տեսակետների արտացոլումը կամ հաստատումը:

© 2023 ՄԱԿ ԱԶԿ/UNIDO: Բոլոր իրավունքները պաշտպանված են: Լիցենզավորված է Եվրոպական միությանը՝ համաձայն պայմանների: